Արձանագրություն N 2

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/10 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով էլեկտրոնային աճուրդով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար էլեկտրական սարքերի և ջրատաքացուցիչների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

17 դեկտեմբերի 2024 թ.
ժամը 11:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Շիրազ Առաքելյանը, անդամներ՝ Լիանա Դեմիրչյանը, Նարեկ Խանամիրյանը և քարտուղար՝ Սպարտակ Հարությունյանը:

Օրակարգ
ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/10 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման, գնահատման և ամփոփման մասին

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/10 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Շիրազ Առաքելյանը նիստը հայտարարեց բացված: Հայտերի վերջնաժամկետին հայտ է ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցը

Հ/Հ	Մասնակցի անվանումը, հասցեն	(ԱԱՀ վճարող) կամ (ԱԱՀ չվճարող)	Գնային առաջարկ /ՀՀ դրամ առանց ԱԱՀ	Գնման գին /ՀՀ դրամ /
1	**Մաքս Շին ՍՊԸ**	ԱԱՀ վճարող	564456655	438000
2	**Մեծ Ծիածան ՍՊԸ**	ԱԱՀ վճարող	318257	460000
	«ԴՈՄՈՒՍ» ՓԲԸ	ԱԱՀ վճարող	322000	
	Մաքս Շին ՍՊԸ	ԱԱՀ վճարող	654684656	
3	**Մաքս Շին ՍՊԸ**	ԱԱՀ վճարող	654646984	720000
4	**Մեծ Ծիածան ՍՊԸ**	ԱԱՀ վճարող	692125	945000
	Մաքս Շին ՍՊԸ	ԱԱՀ վճարող	700000	
	Լուսիկ Խաչատրյան Նիկալայի ԱՁ	ԱԱՀ չվճարող	1575000	
5	**Մաքս Շին ՍՊԸ**	ԱԱՀ վճարող	25466456	200000
6	**Մաքս Շին ՍՊԸ**	ԱԱՀ վճարող	56654646	280000

Հանձնաժողովը արձանագրեց, որ 1-ին, 3-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով մասնակիցների հայտերը համակարգի կողմից մերժվել են: 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից Մեծ Ծիածան ՍՊԸի հայտի ուսումնասիրությամբ պարզեց, որ այն չի համապատասխանում հրավերի պահանջներին՝ մասնավորապես. նշված չափաբաժիններով ապրանքի ամբողջական նկարագիր դաշտում առաջարկվող ապրանքի մոդելները լրացված են թերի:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց

- Ընթացակարգը կասեցնել մեկ աշխատանքային օրով և Մեծ Ծիածան ՍՊԸ-ին առաջարկել հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

անդամներ

Շիրազ Առաքելյան

Լիանա Դեմիրչյան

Նարեկ Խանամիրյան

քարտուղար

Սպարտակ Հարությունյան